ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 37-Լ

«17» 06 2026թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի ավագ դատախազի 1 թափուր հաստիքը Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 17-րդ գլխի 64-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, իսկ «Ընդամենը 8» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով,

2) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 23-րդ գլխի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 105» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 106» բառերով,

3) 1-ին հավելվածի 5-րդ բաժնի 37-րդ գլխի 136-րդ կետի «Բաժնի ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Բաժնի ավագ դատախազ 3» բառերով, իսկ «Ընդամենը 10» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով,

4) 1-ին հավելվածի 5-րդ բաժնի 46-րդ գլխի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 85» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 84» բառերով,

5) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 105» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 106» բառերով, իսկ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 85» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում դատախազների թիվը 84» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր

քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**